



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 48

19 ապրիլի 2012 թվական

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունների դաշինքի կետրոնական շտաբի ղեկավար Լ. Զուրաբյանի իրազեկումը 2012 թվականի մայիս 1-ին ժամը 14⁰⁰ -ից ժամը 16⁰⁰-ի սահմաններում ընտրողների հետ հանդիպում կազմակերպելու նպատակով հանրային հավաք անցկացնելու մասին և համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության լրատվական օրենսգրքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության լրատվության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 21-րդ հոդվածների

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունների դաշինքի կետրոնական շտաբի ղեկավար Լ. Զուրաբյանի իրազեկումը ընդունելի գիտություն Հայ Ազգային Կոնգրեսի կողմից 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում 2012 թվականի մայիսի 1-ին ժամը 14⁰⁰-ից ժամը 16⁰⁰-ի սահմաններում քաղաքային մշակույթի տան հարևանությամբ գտնվող հրապարակում հանրային հավաք անցկացնելու մասին:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումն անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև այդ որոշումը փակցնել քաղաքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքապետարանի վարչական շենքում այն փակցնելու պահից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ